



**National Endowment
for Democracy**
Supporting freedom around the world



«Ժողովրդավարության ազգային հիմնադրամ»

«Վեղես» Իրավապաշտպան ՀԿ

Վաշխատության դեմ պայքար. Առաջարկությունների ներկայացում

Երևան 2018

Առաջարկությունները պատրաստվել են «Վելես» Իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից *«Կոռուպցիայի դեմ պայքար՝ հանուն ժողովրդավարության ամրապնդման»* ծրագրի շրջանակներում՝ *National Endowment for Democracy* Ֆոնդի ֆինանսական աջակցությամբ:

«Վելես» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը գրանցվել է 13.02.2014թ.: Մինչ պետական գրանցումը կազմակերպության անդամները գործել են որպես նախաձեռնող խումբ: Կազմակերպությունը որպես պայքարի թիրախ ընտրել է հասարակության մեջ լայն տարածում գտած այնպիսի արատավոր երևույթները ինչպիսիք են կոռուպցիան և նրա այլանդակ դրսևորումները՝ վաշխառությունը, խարդախությունը, կոռուպցիայի միջոցով ձեռք բերված ֆինանսական միջոցների ստվերային շրջանառությունը, փողերի լվացումը և այլն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վաշխատության վերաբերյալ գործերի քննության ժամանակ հանդիպող իրավական
բացեր4

1. Վաշխատունների կողմից որպես փոխառություն տրված գումարների ծագման աղբյուրի
պարզման կարևորությունը4

Առաջարկն ուղղված է ՀՀ ոստիկանությանը, ՀՀ քննչական կոմիտեին և ՀՀ դատախազությանը: Առաջարկվում է ՀՀ գործող օրենսդրության շրջանակներում աշխատանքի ձևի փոփոխություն, որի համար օրենսդրական փոփոխության կամ որևէ նոր իրավական ակտի անհրաժեշտություն առկա չէ:

2. Վաշխատունների կողմից որպես փոխառություն տրված գումարներից ստացված
եկամուտներից հարկեր չվճարելու խնդիրը.....9

Առաջարկն ուղղված է ՀՀ ազգային ժողովին: Առաջարկվում է կատարել փոփոխություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքում: Կախված փոփոխության բովանդակությունից՝ փոփոխությանը զուգահեռ կարող է առաջանալ ենթաօրենսդրական ակտի (ակտերի) կարիք (օրինակ՝ տոկոսների բարդմամբ փոխառության պայմանագրերը հաշվառելու կարգ): Նման ենթաօրենսդրական ակտ պետք է ընդունվի ՀՀ կառավարության կողմից:

3. Վաշխատուի արարքում այլ հանցակազմերի տարրերի պարզման կարևորությունը.....12

Առաջարկն ուղղված է ՀՀ ոստիկանությանը, ՀՀ քննչական կոմիտեին և ՀՀ դատախազությանը: Առաջարկվում է ՀՀ գործող օրենսդրության շրջանակներում աշխատանքի ձևի փոփոխություն, որի համար օրենսդրական փոփոխության կամ որևէ նոր իրավական ակտի անհրաժեշտություն առկա չէ:

4. Վաշխատության հիման վրա հաշվարկված տոկոսների բռնագանձման պահանջների
գործերով տուժած անձանց պաշտպանության իրավական երաշխիքների սահմանման
անհրաժեշտությունը15

Առաջարկն ուղղված է ՀՀ ազգային ժողովին:

5. Վաշխատության համար ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատասխանատվության
խստացման անհրաժեշտությունը.....16

Առաջարկն ուղղված է ՀՀ ազգային ժողովին:

6. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների վերանայման կարևորությունը.....16

Առաջարկն ուղղված է ՀՀ ազգային ժողովին:

7. Վարույթն իրականացնող մարմինների աշխատանքի հետ կապված արատավոր պրակտիկան.....19

Առաջարկն ուղղված է ՀՀ ազգային ժողովին:

Հավելվածներ.....23

Վաշխատության վերաբերյալ գործերի քննության ժամանակ

հանդիպող իրավական բացեր

1. Վաշխատունների կողմից որպես փոխառություն տրված գումարների ծագման աղբյուրի պարզման կարևորությունը

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում վաշխատության հանցակազմը սահմանված է հետևյալ կերպ.

«1. Վաշխատությունը՝ պարտք տրված դրամի կամ տեսակային հատկանիշով որոշվող գույքի համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալը, ինչպես նաև անձի հետ նրա համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններում այլ գործարք կատարելը, որից օգտվել է մյուս կողմը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն արարքը՝

1) որի հետևանքով տուժողն ընկել է նյութական ծանր կացության մեջ,

2) որը կատարվել է որպես արհեստ,

3) որը կատարվել է տուժողի անչափահաս լինելը կամ մտավոր զարգացման թերություններն օգտագործելով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով»:

Վաշխատության վերաբերյալ նյութերի նախապատրաստումը, ինչպես նաև քրեական գործերի քննությունն իրականացվում է այն տրամաբանությամբ, որ վաշխատության հանցակազմն առկա է, եթե կոնկրետ դեպքով ձեռք բերված տվյալներով հիմնավորվում է վերը նշված հոդվածի բոլոր պայմանների միաժամանակյա առկայությունը: Ըստ էության, նման մոտեցումը բխում է Հայաստանի Հանրապետության օրենսդրական կարգավորումներից:

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները:

Հետևաբար, քրեական գործերի նման կերպ քննությունը տեղավորվում է իրավաբանական տրամաբանության մեջ և քննությունը նման ձևով իրականացնելը

կոնկրետ հանցակազմի քննության տեսանկյունից որևէ էական սխալ չի պարունակում:

Սակայն, պայմանավորված վաշխառության հանցակազմով պաշտպանվող իրավահարաբերությունների առանձնահատկություններով և բնույթով՝ գտնում ենք, որ այդ հանցակազմի քննության նկատմամբ պետք է ցուցաբերվի այլ մոտեցում: Նշված պնդումը հիմնավորվում է հետևյալ պատճառաբանություններով.

Վաշխառության հանցակազմի դիսպոզիցիայի սահմանման մեջ նշվում է պարտք տրված դրամի կամ տեսակային հատկանիշով որոշվող գույքի համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալու մասին:

Վաշխառության վերաբերյալ քրեական գործերի մեզ հայտնի դեպքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դեպքերի ճնշող մեծամասնության փաստերում որպես վաշխառության առարկա նշվող գումարի չափը բավականին մեծ գումար է: Վաշխառությունից տուժած անձինք կորցնում են տներ, առևտրային տարածքներ, այլ անշարժ գույքեր և արժեքավոր գույքեր:

Նման դեպքերում ենթադրյալ վաշխառությունից տուժած անձի ֆինանսական խնդիրների կողքին միշտ աչքի է զարնում գործարքի մյուս կողմի՝ տուժած անձին պարտքով գումար տված անձի գույքային և ֆինանսական ակնհայտ բարվոք վիճակը: Շատ դեպքերում այդ անձինք կամ պաշտոնյաներ են, կամ նախկին պաշտոնյաներ, կամ նշված անձանց հետ որևէ ազգակցական կամ ընկերական կապի մեջ գտնվող անձինք են:

Այդ դեպքերում օբյեկտիվորեն հարցեր են առաջանում. «ինչպե՞ս է անձը ձեռք բերել նման չափի կարողություն», «ինչո՞վ է բացատրվում այն, որ նույն պետությունում ապրող մի անձը զրկվում է իր տնից, իր բոլոր գույքերից, իսկ նրա ֆինանսական նման խնդիրների համար ենթադրյալ մեղավոր անձը որպես սեփականություն կուտակում է տներ, անշարժ գույքեր»:

Ընդ որում, այն անձինք, ում անունները վաշխառության գործերում շոշափվում է որպես վաշխառություն կատարած անձ, որպես կանոն նույն կարգավիճակով հանդես են գալիս նաև այլ գործերով: Անցած տարիների ընթացքում «Վելես» իրավապաշտպան ՀԿ դիմած քաղաքացիների շրջանում հաճախակի են եղել դեպքերը, երբ որպես վաշխառու նշվող անձից տուժած հանդես է գալիս ոչ թե մի անձ, այլ նույն անձից մարդիկ բողոքում են խմբերով, որոնցից յուրաքանչյուրին ենթադրյալ վաշխառուն տվել է մեծ գումարներ և ստացել է մեծ տոկոսներ:

Վաշխառության վերաբերյալ քրեական գործերի քննության ընթացքում քրեական հետապնդման մարմինները երբևէ չեն անդրադարձնում այն հարցին, թե ով է

որպես փոխառության առարկա տրամադրված գումարի իրական սեփականատերը, որն է տրամադրված գումարի ծագման աղբյուրը, արդյո՞ք գումարի սեփականատերը կարող է հիմնավորել օրինական ճանապարհով իր մոտ նման չափի գումարների առաջացումը:

Սրանք հարցեր են, որ ծագում են վաշխառության վերաբերյալ գործերի մեծամասնության քննության ընթացքում, սակայն ոչ մի դեպքում այդ հարցերը քննարկման առարկա չեն դարձվում: Բայց վերը նշված հարցերի վերաբերյալ քննություն կատարելը կարևոր է նրանով, որ այդ հարցերի պատասխանները կարող են բացահայտել վաշխառության գործում որպես փոխառության կողմ հանդես չեկող նոր անձանց, նոր հանցագործություններ: Օրինակ, վաշխառության վերաբերյալ գործերի քննության ընթացքում փոխառության առարկա հանդիսացող գումարի իրական սեփականատիրոջը, տրամադրված գումարի ծագման աղբյուրը պարզելը, գումարների ձեռքբերման օրինականության հարցը քննարկելը կարող է ի հայտ բերել այնպիսի հանցագործությունների հատկանիշներ, ինչպիսիք են խարդատությունը, յուրացնելը կամ վատնելը, հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելը (փողերի լվացումը), պաշտոնեական լիազորությունները չարաշահելը, ապօրինի հարստանալը, կաշառք ստանալը և այլն:

ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խարդախությունը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունը կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը ...

ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրացնելը կամ վատնելը՝ հանցավորին վստահված ուրիշի գույքի հափշտակությունը զգալի չափերով ...

ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելիությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) . . .

ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական դիրքը ծառայության շահերին

հակառակ օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը) ...

ՀՀ քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապօրինի հարստանալը՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի՝ հաշվետու ժամանակահատվածում գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը, որոնք էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները և ողջամտորեն չեն հիմնավորվում դրանցով, և եթե ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող այլ հանցագործության հատկանիշները բացակայում են ...

ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալը, այսինքն՝ պաշտոնատար անձի կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալը կամ պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ իր պաշտոնական դիրքն օգտագործելով այդպիսի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար ...

Ինչպես վերը նշված հանցագործությունները, այնպես էլ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված մի շարք այլ հանցագործությունները կարող են առկա լինել այն դեպքերում, երբ վաշխառության վերաբերյալ գործերում փոխառությամբ տրամադրված է լինում մեծ չափի գումար և այդ գումարի ծագման աղբյուրը որևէ ողջամիտ հիմնավորում չի ունենում:

Սակայն Հայաստանի Հանրապետությունում քրեական հետապնդում իրականացնող մարմինները տարիներ շարունակ չեն փոխում իրենց աշխատառճը և վաշխառության վերաբերյալ գործերի քննության ընթացքում վերը նշված հարցերին բացարձակապես չեն անդրադառնում: «Վելես» իրավապաշտպան ՀԿ դիմած քաղաքացիներից մեկի գործով վերը նշված հարցին անդրադարձ չի կատարվել անգամ այն դեպքում, երբ տուժողն իր փաստարկները հիմնավորելու համար պնդել է, որ իր հետ գործարք կնքած անձը նման չափի կարողություն չունի:

Վաշխառության գործերի նմանօրինակ ձևով քննությունը վկայում է այն մասին, որ պետությունը պարզապես աչք է փակում բարձրացված վերոնշյալ խնդրի նկատմամբ՝ այդպիսով ըստ էության հովանավորելով անհիմն հարստացումը, ապօրինի ճանապարհով հարստություն կուտակելը և ցուցաբերելով հանդուրժողականություն նշված արատավոր արարքի նկատմամբ:

Բարձրացված վերը նշված խնդրի հետ կապված «Վելես» իրավապաշտպան ՀԿ-ի առաջարկը կայանում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական հետապնդում իրականացնող մարմինները փոխեն վաշխառության վերաբերյալ քրեական գործերի քննության պրակտիկան և նմանատիպ գործերի քննության ընթացքում պարտադիր անդրադարձ կատարեն փոխառության առարկա հանդիսացող գումարի ծագման աղբյուրին՝ հատկապես այն դեպքերում, երբ փոխառությամբ տրված գումարի չափը մեծ է և այդ գումարների ծագման օրինականությունը ողջամիտ կասկած է առաջացնում:

Ընդ որում, Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությունը քրեական հետապնդման մարմիններին որևէ կերպ չի սահմանափակում վաշխառության վերաբերյալ քրեական գործերի քննության ընթացքում առանձին անդրադառնալ փոխառությամբ տրված գումարի ծագման աղբյուրին և անձի կողմից այլ հանցագործություններ կատարելու փաստերին: Հակառակը, դրանով քրեական հետապնդման մարմինը կկատարի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացնելու օրենսդրական պահանջը, ինչպես նաև հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու պահանջը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և

հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար:

Նույն քրեական գործի նախաքննության ընթացքում նույն անձի կողմից այլ հանցագործություններ կատարելու փաստերի հայտնաբերման դեպքում կարող է նոր քրեական գործ չհարուցվել, եթե արդեն իսկ հարուցված քրեական գործի շրջանակներում հնարավոր է գործի նախաքննությունն իրականացնել ամբողջ ծավալով:

Առաջարկն ուղղված է ՀՀ ոստիկանությանը, ՀՀ քննչական կոմիտեին և ՀՀ դատախազությանը: Առաջարկվում է ՀՀ գործող օրենսդրության շրջանակներում աշխատանքի ձևի փոփոխություն, որի համար օրենսդրական փոփոխության կամ որևէ նոր իրավական ակտի անհրաժեշտություն առկա չէ:

2. Վաշխատուների կողմից որպես փոխառություն տրված գումարներից ստացված եկամուտներից հարկեր չվճարելու խնդիրը

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված վաշխատության հանցակազմի սահմանումից հետևում է, որ վաշխատություն է համարվում ոչ թե տոկոսով գումար տալը, այլ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալը:

ՀՀ քրեական օրենսգրքի վերը նշված ձևակերպմանը համապատասխան՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը հնարավորություն է տալիս փոխառության պայմանագիրը կնքել տոկոսներ ստանալու պայմանով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 879-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխատուն իրավունք ունի փոխառության գումարից տոկոսներ ստանալ փոխառուից, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով: Փոխառության պայմանագրում հստակ պետք է սահմանվեն տոկոսների չափը և հաշվարկման կարգը: Փոխառության պայմանագրի կնքման պահին տոկոսների չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, սահմանելով նման կարգավորումներ և փոխատուին հնարավորություն տալով մայր գումարից բացի փոխառուից ստանալ տոկոսներ՝ չի սահմանում վերը նշված դրույքներից համապատասխան կարգավորումներ, ինչի արդյունքում տոկոսով փոխառություն տվող անձինք ըստ էության իրականացնում են ձեռնարկատիրական գործունեություն, ստանում են եկամուտներ և կարող են այդ եկամուտներից պետությանը որևէ հարկ չվճարել:

Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերը, վարկային կազմակերպությունները իրականացնելով նույն բնույթի գործունեություն, տոկոսով տրամադրված գումարներից ստացված եկամուտներից պետությանը վճարում են հարկեր: Նույն կերպ, երբ ավանդատուները բանկներում ավանդ են ներդնում և բանկային ավանդի պայմանագրի հիման վրա ստանում են ներդրված գումարի վրա հաշվարկված տոկոսագումարներ, այդ գումարները ևս հարկվում են:

Փաստորեն բոլոր այն սուբյեկտները, որոնք որպես ավանդ, որպես վարկ տրամադրված գումարից ստանում են տոկոսներ, այդ տոկոսներից պետությանը վճարում են տոկոսներ, իսկ նույն բնույթի գործարքներից եկամուտներ ստացող անձինք գտնվում են արտոնյալ վիճակում և պետությանը հարկեր չեն վճարում միայն այն պատճառով, որ իրենց գործունեությունը և եկամուտները գտնվում են ստվերում:

Նշված խնդիրն իր բնույթով անգամ կարելի է նույնացնել ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված ապօրինի ձեռնարկատիրության հանցակազմի հետ:

ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առանց պետական գրանցման, հաշվառման (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի) կամ առանց հատուկ թույլտվության (լիցենզիայի) լիցենզավորման ենթակա կամ օրենքով արգելված ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելը, որը զուգորդվել է անձանց կամ կազմակերպություններին կամ պետությանը զգալի վնաս պատճառելով...

Նշված խնդիրը կարևոր է հատկապես այն դեպքերում, երբ տոկոսով փոխառությամբ տրամադրվող գումարների չափը մեծ է: Մեծ գումարների դեպքում փոխառություն տվողի իրականացրած գործունեությունը գրեթե նույնանում է բանկային գործունեության հետ:

Բարձրացված վերը նշված խնդրի հետ կապված «Վելես» իրավապաշտպան ՀԿ-ն առաջարկում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով մշակել այնպիսի կարգավորումներ, որոնց համաձայն այն փոխառության պայմանագրերը, որոնց հիման վրա հաշվարկվեն տոկոսներ, հաշվառման կամ գրանցման եղանակով գտնվել պետության վերահսկողության տիրույթում, որպեսզի այդ պայմանագրերի հիման վրա ստացվող եկամուտները հարկվեն:

Առաջարկվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանել դրույթ, որի համաձայն տոկոսների բարդմամբ փոխառության պայմանագրերը, որոնք օրենքով սահմանված կարգով գրանցված (կամ հաշվառված) չեն լինի, կհամարվեն առոչինչ գործարքներ:

Նշված եղանակով ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը կարգավորվում է օրինակ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագած իրավունքների պետական գրանցման հետ կապված իրավահարաբերությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային

իրավունքները, այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման:

Գրանցման ենթակա են՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, օգտագործման իրավունքը, հիփոթեքը, սերվիտուտները, ինչպես նաև սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում՝ այլ իրավունքները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 302-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման պահանջը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Նմանօրինակ կարգավորում սահմանելը հնարավորություն կտա քաղաքացիական շրջանառության սուբյեկտների կողմից տոկոսով տրված գումարներից ստացված եկամուտները դարձնել պետության համար տեսանելի և վերահսկելի: Միննույն ժամանակ, նշված կարգավորումը կլուծի պետությունից հարկեր թաքցնելու ռիսկերի հարցը, քանի որ գործարքի կողմերն իրենք շահագրգռված կլինեն պայմանագիրը ներկայացնել պետական գրանցման (կամ հաշվառման), քանի որ հակառակ պարագայում գործարքը ճանաչվելով առոչինչ, կգրկի իրենց այդ գործարքով սահմանված իրավունքներից, այդ թվում՝ փոխառության գումարը և տոկոսները պահանջելու իրավունքից:

Առաջարկվող մեխանիզմի առավելությունը կայանում է նաև նրանում, որ այն իրագործելու համար պետությունից չեն պահանջվում մեծ ռեսուրսներ: Ինչպես արդեն նշվեց վերևում, գործարքի առոչնչության վերաբերյալ կարգավորումը հանդիսանում է երաշխիք առ այն, որ տոկոսների բարդմամբ բոլոր փոխառության պայմանագրերը ինքնակամ կներկայացվեն պետական գրանցման (հաշվառման) և այդ գործընթացն ապահովելու համար պետությունը լրացուցիչ ծախսեր կատարելու անհրաժեշտություն չի ունենա:

Առաջարկվող մեխանիզմի հաջորդ առավելությունն այն է, որ տոկոսների հաշվարկման պայման, որ փոխառության պայմանագրեր կնքած սուբյեկտները որևէ հնարավորություն չեն ունենա շրջանցել օրենքի նշված պահանջը, քանի որ օրենքի պահանջը շրջանցելը բոլոր դեպքերում իր մեջ պարունակելու է գործարքն առոչինչ ճանաչելու վտանգ:

Վերը նշված կարգավորումները սահմանելու հետ մեկտեղ առաջարկվում է վաշխառության վերաբերյալ գործերի քննության ընթացքում քննության առարկա դարձնել այն հարցը, արդյո՞ք գործի շրջանակներում քննարկվող փոխառության պայմանագրից ստացվող եկամուտները սահմանված կարգով հաշվառվել կամ գրանցվել են, գտնվում են պետության տեսադաշտում, թե՞ անձը ստանում է եկամուտ և այդ եկամտից պետությանը հարկեր չի վճարում: Ներկայումս վաշխառության վերաբերյալ քրեական գործքերի քննության ժամանակ նման պրակտիկա չի գործում:

Առաջարկն ուղղված է ՀՀ ազգային ժողովին: Առաջարկվում է կատարել փոփոխությունն ՀՀ քաղաքացիական օրենսգրքում: Կախված փոփոխության բովանդակությունից՝ փոփոխությանը զուգահեռ կարող է առաջանալ ենթաօրենսդրական ակտի (ակտերի) կարիք (օրինակ՝ տոկոսների բարդմամբ փոխառության պայմանագրերը հաշվառելու կարգ): Նման ենթաօրենսդրական ակտ պետք է ընդունվի ՀՀ կառավարության կողմից:

3. Վաշխատուի արարքում այլ հանցակազմերի տարրերի պարզման կարևորությունը

Վելես» իրավապաշտպան ՀԿ-ի հաջորդ առաջարկը վերաբերվում է նրան, որ վաշխատության վերաբերյալ նյութերի նախապատրաստության և քրեական գործերի քննության ընթացքում քրեական հետապնդում իրականացնող մարմինները պետք է պարտադիր քննության առարկա դարձնեն փոխառությամբ գումար տված անձի կողմից ապօրինի ձեռնարկատիրություն իրականացնելու և պետությունից հարկեր թաքցնելու հարցը:

Վաշխատության գործերով անցնող անձանց արարքն իր բնույթով հանդիսանում է ձեռնարկատիրական գործունեություն: Անձինք իրականացնում են տոկոսների բարդմամբ փոխառությունների տրամադրում, որի հիմնական նպատակը շահույթ ստանալն է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

Եթե ավելի մասնավորեցնենք վաշխատության վերաբերյալ գործերում որպես փոխատու հանդես եկող անձանց կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունը, վերջիններս ըստ էության իրականացնում են բանկերի, վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող վարկեր տրամադրելու գործունեություն: Եվ այդ առումով վաշխատության վերաբերյալ գործերում որպես փոխատու անցնող անձանց կողմից իրականացվող գործունեությունը փաստորեն կարելի է նույնացնել լիցենզավորման ենթակա գործունեության հետ: Խոսքը վերաբերվում է հատկապես այն անձանց, որոնց կողմից տրամադրվող տոկոսների բարդմամբ փոխառության գումարների չափը հասնում է միլիոնավոր դրամների:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով սահմանված է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկը: Նշված ցանկում, որպես լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ, նշված է նաև բանկային և ֆինանսական կազմակերպությունների բնագավառը (բանկային գործունեություն, գրավատների կազմակերպում, վարկային կազմակերպության գործունեություն և այլն):

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բանկն իրավաբանական անձ է, որն իրավունք ունի սույն օրենքով սահմանված կարգով տրված լիցենզիաների հիման վրա իրականացնել բանկային գործունեություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բանկային գործունեություն է համարվում ավանդներ ընդունելը կամ ավանդներ ընդունելու առաջարկությամբ հանդես գալը և ավանդն ընդունողի անունից և ռիսկով դրանք տեղաբաշխելը՝ վարկեր, ավանդներ, դեպոզիտներ տրամադրելու և (կամ) ներդրումներ կատարելու միջոցով:

Առանց Կենտրոնական բանկի կողմից տրված բանկային գործունեության լիցենզիայի Հայաստանի Հանրապետության տարածքում բանկային գործունեություն իրականացնելն արգելվում է:

Փաստացի բանկային գործունեություն իրականացնող ֆիզիկական անձինք փաստորեն զբաղվում են արգելված գործունեությամբ, և այդ գործունեության իրականացմամբ պետությանը պատճառում են էական ֆինանսական վնասներ, քանի որ ի տարբերություն օրինական դաշտում բանկային գործունեություն իրականացնող սուբյեկտների, այս անձինք իրենց գործունեությունն իրականացնում են առանց լիցենզավորման հետ կապված պետական տուրք վճարելու:

Օրինակ, բանկային գործունեության համար լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար պետական տուրքի դրույթաչափը տարեկան 3.000.000 ՀՀ դրամ է, վարկային գործունեության համար՝ 500.000 ՀՀ դրամ:

Ելնելով վերը նշված տրամաբանությունից՝ վաշխառություն իրականացնող անձանց գործողություններում կարելի է արձանագրել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշներ:

ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի համաձայն՝

1. Առանց պետական գրանցման, հաշվառման (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի) կամ առանց հատուկ թույլտվության (լիցենզիայի) լիցենզավորման ենթակա կամ օրենքով արգելված ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելը, որը զուգորդվել է անձանց կամ կազմակերպություններին կամ պետությանը զգալի վնաս պատճառելով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկ տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը զուգորդվել է անձանց կամ կազմակերպություններին կամ պետությանը խոշոր վնաս պատճառելով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից երկուհազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի

ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երկու տարի ժամկետով:

3. Նույն արարքը, որը՝

1) գուգորդվել է անձանց կամ կազմակերպություններին կամ պետությանն առանձնապես խոշոր չափի վնաս պատճառելով,

2) կատարվել է կազմակերպված խմբի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով:

4. Սույն հոդվածում զգալի չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով գումարը, խոշոր չափ՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև երկուհազարապատիկի չափով գումարը, իսկ առանձնապես խոշոր չափ՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող գումարը:

Սույն հոդվածի համաձայն՝ պետությանը պատճառված վնասի հաշվարկում ներառվում է նաև պետական գրանցման, ինչպես նաև հատուկ թույլտվության (լիցենզիայի) համար գանձման ենթակա պետական տուրքի գումարի չափը:

Բացի այն, որ վաշխառություն իրականացնող անձանց գործունեությունը պետք է դիտարկվի առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեության իրականացում, նշված անձանց արարքներում առկա են նաև ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի տարրեր:

ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի համաձայն՝

1. Հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը խոշոր չափերով չվճարելու նպատակով՝

1) օրենքով սահմանված հաշվետվությունում, հաշվարկում, հայտարարագրում կամ հարկման հիմք հանդիսացող՝ հարկը, տուրքը, պարտադիր այլ վճարը հաշվարկելու կամ վճարելու պարտավորություն առաջացնող պարտադիր այլ փաստաթուղթում ակնհայտ կեղծ տվյալ մտցնելը կամ

2) օրենքով սահմանված հաշվետվությունը, հաշվարկը, հայտարարագիրը կամ հարկման հիմք հանդիսացող՝ հարկը, տուրքը, պարտադիր այլ վճարը հաշվարկելու կամ վճարելու պարտավորություն առաջացնող պարտադիր այլ փաստաթուղթը օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երեքհազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում է ազատագրվմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ:

3. Սույն հոդվածի իմաստով խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհազարապատիկից տասնհինգհազարապատիկը չգերազանցող գումարը, իսկ առանձնապես խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգհազարապատիկը գերազանցող գումարը:

Ելնելով գործի հանգամանքներից՝ քրեական հետապնդման մարմինները պետք է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում որոշեն, թե ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործություններից կոնկրետ որի հատկանիշներն են առկա անձի կողմից կատարված արարքում, սակայն պետությանը հարկեր չվճարելով իրականացված ձեռնարկատիրական գործունեությանը բոլոր դեպքերում պետք է տրվի համապատասխան գնահատական:

Առաջարկն ուղղված է ՀՀ ոստիկանությանը, ՀՀ քննչական կոմիտեին և ՀՀ դատախազությանը: Առաջարկվում է ՀՀ գործող օրենսդրության շրջանակներում աշխատանքի ձևի փոփոխություն, որի համար օրենսդրական փոփոխության կամ որևէ նոր իրավական ակտի անհրաժեշտություն առկա չէ:

4. Վաշխառության հիման վրա հաշվարկված տոկոսների բռնազանձման պահանջների գործերով տուժած անձանց պաշտպանության իրավական երաշխիքների սահմանման անհրաժեշտությունը

ՀՀ օրենսդրությունը չի սահմանում որևէ կարգավորում, որը վաշխառուին ուղղակիորեն արգելի ստանալ վաշխառուական գործունեության հիման վրա հաշվարկված տոկոսների գումարները: Անգամ այն դեպքում, երբ անձի մեղավորությունը հաստատվում է և անձը վաշխառության համար ենթարկվում է քրեական պատասխանատվության, վերջինս չի գրկվում իր կողմից տրված գումարների հիման վրա հաշվարկված տոկոսները պահանջելու իրավունքից:

Վաշխառությունից տուժած անձը պետք է տարբեր հայցերով դիմի դատարաններ, փորձի ապացուցել տոկոսների հաշվարկման ոչ իրավաչափությունը և դատական ակտի հիման վրա ազատվել այդ տոկոսները վճարելու պարտականությունից:

Վաշխառուների հանցավոր գործունեությունից տուժած անձանց իրավունքների պաշտպանության, ինչպես նաև դատական տարաբնույթ քաշքշուկներից նրանց զերծ պահելու նպատակով առաջարկում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանել այնպիսի իրավակարգավորում, որը

վաշխառության համար դատապարտված անձին գրկի վաշխառության հիման վրա հաշվարկված տոկոսները մյուս կողմից պահանջելու հնարավորությունից:

Նման իրավակարգավորում կարող է սահմանվել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածում կամ ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասում:

Առաջարկն ուղղված է ՀՀ ազգային ժողովին:

5. Վաշխառության համար ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատասխանատվության խստացման անհրաժեշտությունը

Պարտադիր ենք համարում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածով նախատեսված պատժի չափերի խստացումը:

ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքի համար նախատեսված է պատիժ տուգանքի ձևով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, ինչպես նաև ազատազրկում՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է պատիժ տուգանքի ձևով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

Վերը նշված իրավանքներով նախատեսված արարքների կատարման համար նման մեղմ պատիժների կիրառումը որևէ իրավաչափ հիմնավորում չունի: Նման պատիժը չի կարող ծառայել պատիժների նպատակների իրականացմանը: Այլ անձի տնից գրկած, այլ անձի ամբողջ կյանքը կործանած վաշխառուն օրինակ 600.000 ՀՀ դրամ տուգանք վճարելով չի ուղղվելու: Կամ արդյո՞ք վաշխառուից տուժած անձը սոցիալական արդարությունը կհամարի վերականգնված, եթե տեսնի, որ իրեն տնից գրկած, տարիներ շարունակ իրեն ֆինանսական խնդիրներ և բարոյական վնաս պատճառած անձը տուգանվում է 500.000 ՀՀ դրամի չափով:

Առաջարկն ուղղված է ՀՀ ազգային ժողովին:

6. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների վերանայման կարևորությունը

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ Սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է, որ պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ սույն օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների

վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը:

Նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված են բողոքի ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում Պաշտպանի լիազորությունները.

1) անարգել այցելելու իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ կազմակերպություն, ներառյալ՝ գորամասեր, ինչպես նաև ազատությունից զրկման վայրեր.

2) իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից պահանջելու և ստանալու բողոքին կամ սեփական նախաձեռնությամբ քննարկվող հարցին առնչվող՝ Պաշտպանի գնահատմամբ անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր, տեղեկություններ կամ պարզաբանումներ, ինչպես նաև աջակցություն այդ հաստատություններ կատարվող այցերի ընթացքում.

3) իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից, բացառությամբ դատարանների ու դատավորների, ստանալու քննարկման ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ.

4) «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ Սահմանադրական օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում նշված կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտման դեպքերում սկսված քննարկման ընթացքում անարգել այցելելու այդ կազմակերպություններ, դրանք ներկայացնող իրավասու անձանցից պահանջել և ստանալ բողոքին կամ հարցին առնչվող անհրաժեշտ տեղեկություններ, պարզաբանումներ, նյութեր կամ փաստաթղթեր.

5) դիմելու իրավասու մարմիններին կամ կազմակերպություններին բողոքի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ քննարկման առնչությամբ պարզաբանման ենթակա հանգամանքների վերաբերյալ փորձագիտական հետազոտություններ իրականացնելու և դրանց արդյունքում կազմված եզրակացությունները ստանալու համար: Փորձաքննությունների իրականացման և եզրակացությունների տրամադրմանն առնչվող ֆինանսական ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին.

6) ծանոթանալու քրեական, քաղաքացիական, վարչական, կարգապահական և այլ իրավախախտումների վերաբերյալ այն գործերին, որոնց վերաբերյալ ակտերն օրինական ուժի մեջ են մտել, ինչպես նաև այն նյութերին, որոնց կապակցությամբ մերժվել է քրեական գործերի հարուցումը, կամ կարճվել է քրեական գործի վարույթը, ստանալու դրանք էլեկտրոնային կամ այլ նյութական կրիչներով.

7) դիմելու դատական իշխանության՝ դատական պրակտիկայի ամփոփման համար պատասխանատու մարմիններին՝ դատական պրակտիկայում առաջացող իրավական հարցերի վերաբերյալ խորհրդատվական բնույթի պարզաբանումներ

ստանալու նպատակով, ինչպես նաև առաջարկներ ներկայացնելու դատական պրակտիկայի կատարելագործման վերաբերյալ:

Օրենքով սահմանված է նաև, որ պաշտպանն իրավասու չէ միջամտելու դատական վարույթին կամ դատավորների լիազորությունների իրականացմանը կոնկրետ գործով: Պաշտպանին հասցեագրված բողոքը չի քննարկվում, իսկ բողոքի կապակցությամբ սկսված քննարկումը դադարեցվում է նաև այն դեպքում, երբ բողոք *ներկայացնելուց հետո շահագրգիռ անձը բողոքում նշված նույն հիմքով և առարկայով հայց կամ բողոք է ներկայացրել դատարան, կամ առկա է նույն հիմքով և նույն առարկայով հայցի կամ բողոքի վերաբերյալ դատարանի վերջնական դատական ակտ:*

Փաստորեն, մի շարք իրավունքների խախտումներ ունեցող վաշխառության գոհ դարձած անձը, իր խախտված իրավունքների վերականգնման հարցով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին դիմելով՝ կարող է ակնկալել իրավական աջակցություն հիմնականում իր իրավունքների վերաբերյալ որոշակի պարզաբանումներ ստանալու եղանակով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների նման սահմանումը և պետության մեջ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտին այդպիսի դեր հատկացնելը չի համապատասխանում անգամ ինստիտուտի անվանը: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին դիմած և իրավունքների պաշտպանություն հայցող անձը ոչ մի դեպքում չի կարող ստանալ իր ակնկալիքներին համարժեք իրավական օգնություն այնքան ժամանակ, քանի դեռ Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանին տրված են պարզաբանումներ ստանալու և անձին տեղեկատվություն տրամադրելու բնույթի լիազորություններ:

Կարծում ենք, որ Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանին դիմած անձինք, այդ թվում նաև վաշխառությունից տուժածները, պետք է հնարավորություն ունենան օգտվելու իրենց իրավունքների պաշտպանությանն ուղղված ավելի գործուն մեխանիզմներից և դրան համապատասխան «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ Սահմանադրական օրենքով անհրաժեշտ է ընդլայնել պաշտպանի լիազորությունների շրջանակը, պաշտպանին և նրա աշխատակազմին տալ լիազորություններ, որոնց հիման վրա իրականացվեն անձի իրավունքների պաշտպանությանն ուղղված կոնկրետ գործողություններ: Հաշվի առնելով Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի դերը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է օրենքով սահմանել քրեական հետապնդման մարմինների անօրինական գործողությունների կամ անգործությունների դեմ պաշտպանի պայքարի հստակ գործիքներ:

Առաջարկն ուղղված է ՀՀ ազգային ժողովին:

**7. Վարույթն իրականացնող մարմինների աշխատանքի հետ կապված արատավոր
սյրակտիկան**

«Վելես» իրավապաշտպան ՀԿ-ին դիմած անձանց դժգոհությունները հաճախ կապված են իրենց գործի անհարկի ձգձգումների, դատական քաշքշուկների հետ:

Նշված խնդիրը տեսանելի ցույց տալու համար ներկայացնում ենք մի դատական գործի դատավարական ընթացք, որի շրջանակներում վաշխառությունից տուժած քաղաքացու իրավունքների պաշտպանությունն իրականացվում է «Վելես» իրավապաշտպան ՀԿ-ի կողմից:

Դեռևս **2014 թվականի փետրվարի 23-ին** Զինա Աշոտի Մելիքյանը ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնում հաղորդում է տվել վաշխառությունների մասին: Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ:

2015 թվականի հուլիսի 15-ին նշված գործով որոշում է կայացվել «Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին»:

Թիվ 13127214 քրեական գործով կայացված «Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» 15.07.2015թ. որոշման դեմ 2015 թվականի հուլիսի 25-ին Երևան քաղաքի դատախազին ներկայացվել է բողոք:

Թիվ 13127214 քրեական գործով կայացված որոշման դեմ ներկայացված բողոքի վերաբերյալ Երևան քաղաքի դատախազը որոշում չի կայացրել:

25.09.2015թ. ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին ներկայացվել է բողոք՝ թիվ 13127214 քրեական գործով կայացված «Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» 15.07.2015թ. որոշման և Երևան քաղաքի դատախազի անգործության դեմ:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, քննության առնելով ներկայացված բողոքը, 10.05.2016թ. թիվ ԵԿԴ/0202/11/15 որոշմամբ մասնակիորեն բավարարել է բողոքը և Երևան քաղաքի դատախազությանը պարտավորեցրել է վերացնել որոշմամբ արձանագրված՝ դիմող Զինա Մելիքյանի իրավունքների խախտումը:

Դատարանի 10.05.2016թ. որոշման դեմ Երևան քաղաքի դատախազի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 12.10.2016թ. որոշում է կայացրել Երևան քաղաքի դատախազի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը մերժելու և առաջին ատյանի դատարանի 10.05.2016թ. թիվ ԵԿԴ/0202/11/15 որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 12.10.2016թ. որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք:

22.02.2017թ. ՀՀ վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին:

Երևան քաղաքի դատախազի պաշտոնակատար Լ. Գրիգորյանը, ուսումնասիրելով ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում քննված թիվ 13127214 քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին 15.07.2015թ. որոշման դեմ իմ կողմից ներկայացված բողոքը՝ 10.03.2017թ. որոշում է կայացրել բողոքն առանց քննության թողնելու մասին:

ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին ներկայացրել են բողոք՝ թիվ 13127214 քրեական գործով կայացված «Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» 15.07.2015թ. որոշման և «Բողոքն առանց քննության թողնելու մասին» Երևան քաղաքի դատախազի պաշտոնակատարի որոշման դեմ:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, քննության առնելով ներկայացված բողոքը, 03.10.2017թ. որոշում է կայացրել բողոքը մասնակիորեն բավարարելու մասին: Դատարանի որոշմամբ արձանագրվել է, որ Զինա Մելիքյանի կողմից բողոքարկման ժամկետը բաց չի թողնվել և Դատարանը Երևան քաղաքի դատախազությանը պարտավորեցրել է վերացնել որոշմամբ արձանագրված՝ դիմող Զինա Մելիքյանի իրավունքների խախտումները:

24.11.2017թ. Երևան քաղաքի դատախազ Բ. Ասլանյանը որոշում է կայացրել բողոքը մերժելու մասին:

Թիվ 13127214 քրեական գործով կայացված «Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» 15.07.2015թ. որոշման և «Բողոքը մերժելու մասին» 24.11.2017թ. որոշման դեմ ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին ներկայացվել է բողոք:

2018 թվականի փետրվարի 15-ին ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել բողոքն ամբողջությամբ մերժելու մասին:

Դատարանի նշված որոշման դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ներկայումս քննվում է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի վարույթում:

Փաստորեն, երեք տարի շարունակ դատախազությունը զբաղված է գրություններ գրելով, դատարաններում «Վելես» իրավապաշտպան ՀԿ-ի դեմ պայքարելով, բողոքներ, բողոքների պատասխաններ ներկայացնելով: Դատարանն արձանագրում է անձի իրավունքի խախտում, դրանից հետո դատախազությունը կայացնում է այնպիսի որոշում, որն իր բնույթով պարունակում է անձի նույն իրավունքի խախտումը, ինչից հետո վերը նշված շրջանը կրկին շարունակվում է և անձը ստիպված է իր իրավունքների պաշտպանության համար անընդհատ գտնվել դատական գործընթացների մեջ:

Կոնկրետ բերված օրինակում այդ դատական գործընթացի շրջանակում որևէ էական հարց կամ հանցագործության հանգամանքներ չեն քննարկվում: Տարիներ շարունակ դատարանում քննարկվում է «մի ծրարի պատմություն»: Քննիչն իր կայացրած որոշումը քաղաքացուն ուղարկել է հասարակ նամակով, ինչի պատճառով նամակը ստանալու օրը փոստային ծառայության կողմից որևէ փաստաթղթում չի արձանագրվել, ինչի պատճառով դատախազությունը դիտարկում է, որ անձը բաց է թողել քննիչի որոշման դեմ բողոք ներկայացնելու ժամկետը և արդեն երեք տարի դատախազությունը պայքարում է միայն այն բանի համար, որ Զինա Մելիքյանի բողոքը համարվի ժամկետանց և չքննվի:

Եթե դատախազությունը նույնքան ժամանակ և ռեսուրսներ տրամադրեր Զինա Մելիքյանի կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդման պատշաճ քննությանը, տեղի ունեցած վաշխառության դեպքը և հանցագործություն կատարած անձինք հավանաբար կբացահայտվեին: Բայց դրա փոխարեն պետությունը զբաղված է վաշխառությունից տուժած անձի կողմից ինչ-որ ծրար ստանալու օրվա հետ կապված վեճով, ներկայացնում է տասնյակ էջերից կազմված վերաքննիչ, վճռաբեկ բողոքներ:

Եվ այդ անհասկանալի վարքագծին զուգահեռ Զինա Մելիքյանի կողմից ներկայացված փաստերի քննությունը կորցնում է իր նշանակությունը: Նամակի ծրարի վրա դրված ամսաթվի հետ կապված դատախազության կողմից տարիներ շարունակ դիքթոնորում ներկայացնելը հանգեցնելու է նրան, որ լրանալու են այդ գործով վաշխառություն կատարած անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները:


ՀՀ դատախազության նմանօրինակ աշխատելաճը եզակի դեպք չէ: Հանցավորության դեմ պայքարում և անձանց խախտված իրավունքների պաշտպանության հարցում ՀՀ դատախազության նման աշխատանքը կրում է պարբերական բնույթ:

Որպես մեկ այլ օրինակ՝ ներկայացնենք քաղաքացի Գայանե Թումասյանի գործի ընթացքը, ում շահերի պաշտպանությունը ևս իրականացվում է Վելես ՀԿ-ի կողմից: Տարիներ շարունակ Վելես ՀԿ-ն դատարաններում պայքարում է այն բանի համար, որ դատախազությունը Գայանե Թումասյանի կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդումը քննի հաղորդման մեջ նշված հանգամանքների շուրջ և ներկայացված արարքներին տա ճիշտ իրավական գնահատական: Անգամ այն բանից հետո, երբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն արձանագրում է Գայանե Թումասյանի իրավունքների խախտում և իր որոշմամբ վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնում է վերացնել Գայանե Թումասյանի իրավունքների խախտումը, դատախազությունը միննույն է շարունակում է քննությունն իրականացնել ներկայացված փաստերի հետ որևէ առնչություն չունեցող հոդվածի շրջանակներում: Ակնհայտ է, որ դատախազությունը պարզապես ստեղծում է մի իրավիճակ, որ Գայանե Թումասյանն իր իրավունքների պաշտպանության համար կրկին դիմի դատարան, կրկին 1-2 տարի անցնի դատախազությանը պարզ փաստեր բացատրելու համար և այդ ամբողջ ժամանակն ըստ էության աշխատում է ի օգուտ վաշխառություն կատարած անձի, այդ ընթացքում անցնում են վաշխառություն կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները, քրեական գործի հանգամանքների պարզումը դառնում է առավել բարդ և անիրականանալի:

Գտնում ենք, որ անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանել դատարաններում նման դեպքերի քննության առավել պարզ ընթացակարգեր կամ կարճ ժամկետներ, որպեսզի դատախազությունը հնարավորություն չունենա իր կողմից կիրառվող մեթոդներով տարիներով ձգձգել գործի քննության ընթացքը:

Առաջարկն ուղղված է ՀՀ ազգային ժողովին:

Կազմակերպված վաշխառուական հանցախումբ



Գայանե Թումասյանի գործը

Գայանե Թումասյանը «Վելես» իրավապաշտպան հասարակական կազմակերպությանն է դիմել 2014 թվականին: Կազմակերպությունը Թումասյանին տրամադրում է իրավաբանական խորհրդատվություն, ներկայացնում է նրա շահերը դատարանում:

02.02.2014թ. Գ. Թումասյանը հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժին:

24.02.2014թ. Նոր Նորքի քննչական բաժնում որոշում է կայացվել Գ.Թումասյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցակազմի բացակայության հիմքով:

11.03.2014թ. Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Ն.Թովուզյանը որոշում է կայացրել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ որոշումը վերացնելու և ՀՀ քր. օր. 325 հոդվածի 1-ին մասով քրեական գործ հարուցելու վերաբերյալ, որն ուղարկվել է Նոր Նորքի քննչական բաժին՝ գործին շնորհելով թիվ 17112714 համարը:

08.05.2014թ. թիվ 17112714 քրեական գործի վարույթը կարճվել է:

17.07.2014թ. Գ.Թումասյանի կողմից բողոքարկվել է թիվ 17112714 քրեական գործի վարույթի կարճման որոշումը:

05.11.2014թ. Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում /դատավոր Ս. Ուզունյան/ բողոքը բավարարվել է:

12.11.2014թ. ՀՀ դատախազությունը վերաքննության կարգով բողոքարկել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 05.11.2014թ. որոշումը:

15.01.2015թ. ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը որոշում է կայացրել ՀՀ դատախազության բողոքը մերժելու մասին:

03.02.2015թ. Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազությունը որոշում է կայացրել թիվ 17112714 քրեական գործի վարույթը վերսկսելու համար:

11.05.2015թ. Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ս. Պողոսյանն իր վարույթում գտնվող թիվ 17112714 քրեական գործով 2015 թվականի մայիսի 11-ին որոշում է կայացրել «Քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին»:

01.07.2015թ. բողոք է ներկայացվել Երևան քաղաքի դատախազություն Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ս. Պողոսյանի թիվ 17112714 քրեական գործով 2015 թվականի մայիսի 11-ին կայացրած «Քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին» որոշման դեմ:

27.07.2015թ. Երևան քաղաքի դատախազ Ա. Դավթյանի որոշմամբ ներկայացված բողոքը մերժվել է:

02.09.2015թ. բողոք է ներկայացվել Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան դատախազության 27.07.2015թ. որոշման դեմ:

04.11.2015թ. Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել թիվ 17112714 քրեական գործով «քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին» 11.05.2015թ. որոշման և «Բողոքը մերժելու մասին» 27.07.2015թ. որոշման դեմ Գ. Թումասյանի ներկայացրած բողոքը մերժելու մասին:

16.11.2015թ. վերաքննիչ բողոք է ներկայացվել 04.11.2015թ. Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի որոշման դեմ:

21.01.2016թ. ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը /նախագահող դատավոր Հ. Տեր-Ադամյան/ բողոքը մերժել է

08.02.2016թ. ներկայացվել է վճռաբեկ բողոք 21.01.2016թ. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման դեմ:

01.05.2016թ. ՀՀ Վճռաբեկ դատարանը Գ.Թումասյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել է

25.12.2015թ. բողոք Արդարադատության խորհուրդ Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դ. Հարությունյանի վերաբերյալ / անպատասխան/

04.12.2015թ. Գ.Թումասյանը հաղորդում է ներկայացրել հանցագործության մասին ՀՀ գլխավոր դատախազ Գ. Կոստանյանին Հ. Երիցյանի կողմից կատարված խարդախության վերաբերյալ

11.03.2016թ. Գ.Թումասյանի ներկայացուցիչ փաստաբան Ա.Սուքիասյանը բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազ Գ. Կոստանյանին ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության դատախազ Վ. Դովմազյանի անգործության դեմ:

28.04.2016թ. Գ.Թումասյանի ներկայացուցիչ փաստաբան Ա.Սուքիասյանը բողոք է ներկայացրել ՀՀ Կենտրոն և Նորք- Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության դատախազ Վ. Դոլմազյանի և ՀՀ գլխավոր դատախազության անգործության դեմ:

27.06.2016թ. ՀՀ Կենտրոն և Նորք- Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը բավարարել է Գ. Թումասյանի բողոքը:

11.07.2016թ. ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության դատախազ Վ. Դոլմազյանի վերաքննիչ բողոքը 27.06.2016թ. ՀՀ Կենտրոն և Նորք- Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի որոշման դեմ:

09.08.2016թ. ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը մերժել է ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳՔՎ դատախազ Վ. Դոլմազյանի բողոքը 27.06.2016թ. ՀՀ Կենտրոն և Նորք- Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի որոշման դեմ և պարտավորեցրել է քրեական գործ հարուցել:

15.09.2016թ. ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 57125116 քրեական գործը:

17.10.2016թ. ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնում կայացվել է որոշում թիվ 57125116 քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին:

07.11.2016թ. բողոք է ներկայացվել Արմավիրի մարզի դատախազին թիվ 57125116 քրեական գործով “ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին” 17.10.2016թ. որոշման դեմ:

14.11.2016թ. Արմավիրի մարզի դատախազը որոշում է կայացրել 07.11.2016թ. բողոքը մերժելու մասին:

28.11.2016թ. բողոք ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան թիվ 57125116 քրեական գործով «քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» 17.10.2016թ. որոշման և «բողոքը մերժելու մասին» 14.11.2016թ. որոշման դեմ:

16.08.2017թ. ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանը մերժել է Գ.Թումասյանի ներկայացուցիչ փաստաբան Ա.Սուքիասյանի բողոքը թիվ 57125116 քրեական գործով «քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» 17.10.2016թ. որոշման և «բողոքը մերժելու մասին» 14.11.2016թ. որոշման դեմ:

04.09.2017թ. Գ.Թումասյանի ներկայացուցիչ փաստաբան Ա.Սուքիասյանը բողոք է ներկայացրել ՀՀ Վերաքննիչ քրեական դատարան թիվ ԱԴԴ 1/0016/11/16 գործով ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 16.08.2017թ. «բողոքը քննության առնելու մասին» որոշման դեմ:

10.01.2018թ. ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը բավարարել է Գ. Թումասյանի բողոքը:

18.05.2018թ. Թիվ 57125116 քրեական գործը նախաքննությունը վերսկսվել է

Հավելված 3

Զինախդա Մելիքյանի գործը

Զինախդա Մելիքյանը «Վելես» Իրավապաշտպան հասարակական կազմակերպության հիմնադիրներին է դիմել դեռևս 2013թ.: Կազմակերպությունը ներկայացրել է Մելիքյանի շահերը Կենտրոնի քննչական բաժնում, որտեղ Զինախդայի դիմումի համաձայն քրեական գործ է հարուցված՝ վաշխառության փաստի առթիվ:

23.02.2014թ. Զինա Մելիքյանը հաղորդում է ներկայացրել հանցագործության մասին ՀՀ ոստիկանության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների բաժին:

10.03.2014թ. ՀՀ ՔԿ Կենտրոն և Նորք-Մարաշ քննչական բաժնում դեպքի առթիվ ՀՀ քր. օր.213 հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 13127214 քրեական գործը:

15.07.2015թ. ՀՀ ՔԿ Կենտրոն և Նորք-Մարաշ քննչական բաժնի քննիչ՝ Է.Կարապետյանի կողմից կայացվել է որոշում քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին:

25.07.2015թ. փաստաբան Ա.Սուքիասյանի կողմից Երևան քաղաքի դատախազին բողոք է ներկայացվել 15.07.2015թ. «քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» որոշման դեմ:

25.09.2015թ. փաստաբան Ա.Սուքիասյանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան թիվ 13127214 քրեական գործով կայացված «քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» 15.07.2015թ. որոշման և Երևան քաղաքի դատախազի անգործության դեմ:

10.05.2016թ. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք -Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր՝ Ա.Բեկթաշյանի կողմից կայացվել է որոշում փաստաբան Ա.Սուքիասյանի 25.09.2015թ. բողոքի վերաբերյալ՝ այն մասնակի բավարարելու և Երևան քաղաքի դատախազությանը պարտավորեցնելու վերացնել Զ.Մելիքյանի իրավունքների խախտումը:

20.05.2016թ. ՀՀ Երևան քաղաքի դատախազը բողոք է ներկայացրել ՀՀ Վերաքննիչ դատարան՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք -Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 10.05.2016թ. թիվ ԵԿԴ/0202/11/15 որոշման դեմ:

12.10.2016թ. ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր՝ Ա.Ազարյանը մերժել է ՀՀ Երևան քաղաքի դատախազի 20.05.2016թ. բողոքը:

08.12.2016թ. ՀՀ Երևան քաղաքի դատախազը բողոք է ներկայացրել ՀՀ Վճռաբեկ դատարան՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք -Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 10.05.2016թ. թիվ ԵԿԴ/0202/11/15 որոշման դեմ:

22.02.2017թ. ՀՀ Վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին: Երևան քաղաքի դատախազի պաշտոնակատար Լ.Գրիգորյանը, ուսումնասիրելով ՀՀ ՔԿ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք –Մարաշ քննչական բաժնում քննված թիվ 13127214 քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին 15.07.2015թ. որոշման դեմ փաստաբան Ա.Սուքիասյանի կողմից ներկայացված բողոքը՝ **10.03.2017թ.** որոշում է կայացրել բողոքն առանց քննության թողնելու մասին:

03.04.2017թ. բողոք է ներկայացվել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք -Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան թիվ 13127214 քրեական գործով կայացված «քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» 15.07.2015թ.որոշման և բողոքն առանց քննության թողնելու մասին 10.03.2017թ. որոշման դեմ:

03.10.2017թ. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք -Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը բավարարել է Զ.Մելիքյանի բողոքը՝ դատախազությանը պարտավորեցնելու քննության առնել քաղաքացու բողոքը:

24.11.2017թ. Երևան քաղաքի դատախազի կողմից որոշում է կայացվել թիվ 13127214 քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին 15.07.2015թ. որոշման դեմ փաստաբան Ա.Սուքիասյանի կողմից ներկայացված բողոքը մերժելու մասին:

28.12.2017թ. բողոք է ներկայացվել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք -Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան թիվ 13127214

քրեական գործով կայացված «քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» 15.07.2015թ. որոշման և Երևան քաղաքի դատախազի կողմից բողոքը մերժելու մասին 24.11.2017թ. որոշման դեմ:

15.02.2018թ. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք - Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը մերժել է Ջ.Մելիքյանի բողոքը:

14.03.2018թ. փաստաբան Ա.Սուքիասյանի կողմից բողոք է ներկայացվել ՀՀ Վերաքննիչ քրեական դատարան թիվ ԵԿԴ/0002/11/18 գործով ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 15.02.2018թ. որոշման դեմ:

Հավելված 4

Դավիդ Ստեփանյանի գործը

12.02.2016թ. «Վելես» Իրավապաշտպան ՀԿ իրավական աջակցություն ստանալու համար դիմել է ՌԴ-ում բնակվող ՀՀ քաղաքացի Դավիդ Ստեփանյանը, իր դիմումում նշելով, որ 2015թ. մայիսից ստիպված ընտանիքով արտագաղթել են ՌԴ Խաբարովսկ քաղաք: Իր խոսքերով արտագաղթի հիմնական և միակ պատճառը ՀՀ քաղաքացիական ավիացիայի վարչության նախկին պետ Հովհաննես Պավելի Երիցյանն է, որը իր կապերը իրավապահ մարմիններում, դատարաններում օգտագործելով խարդախությամբ տիրացել է Ստեփանյանների գույքին, ֆինանսական միջոցներին զցելով իրենց ծանր սոցիալական և բարոյահոգեբանական վիճակի մեջ ինչպես նաև վերջինիս շարունակական սպառնալիքներ է հնչեցրել ու հնչեցնում ինչպես անձամբ իրեն, այնպես էլ իր ընտանիքի հասցեին:

01.04.2016թ. Դավիդ Ստեփանյանը ներկայացրել է հաղորդում հանցագործության մասին ՀՀ Գլխավոր դատախազին:

06.05.2016թ. Ոստիկանության Կենտրոնական բաժնի Մարաշի բաժանմունքի հետաքննիչ Հ. Ներսիսյանի կողմից մերժվել է դիմում-բողոքի հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը:

23.05.2016թ. Մեր կազմակերպության կողմից Երևան քաղաքի դատախազին բողոք է ներկայացվել «Նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին» 06.05.2016թ. որոշման դեմ:

01.06.2016թ. ՀՀ ՔԿ Կենտրոն և Նորք-Մարաշ քննչական բաժնում դեպքի առթիվ հարուցվել է թիվ 63203516 քրեական գործը ՀՀ քր. օր. 137 հոդվածի հատկանիշներով:

10.11.2016թ. ՀՀ ՔԿ Կենտրոն և Նորք- Մարաշ քննչական բաժնում ավագ քննիչ Պ. Աղաբաբյանի կողմից կայացվել է որոշում քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին:

22.11.2016թ. Երևան քաղաքի դատախազին բողոք է ներկայացվել «Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» 10.11.2016թ. որոշման դեմ:

01.12.2016թ. Երևան քաղաքի դատախազին ուղղված բողոքը «Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» 10.11.2016թ. որոշման դեմ մերժվել է:

27.12.2016թ. ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք- Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին բողոք է ներկայացվել թիվ 63203516 քրեական գործով կայացված «Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» 10.11.2016թ. որոշման և « Բողոքը մերժելու մասին» 01.12.2016թ. որոշման դեմ:

14.03.2017թ. ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք- Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Մ. Մակյանը բավարարել Դ. Ստեփանյանի ներկայացուցիչ փաստաբան Ա. Սուքիասյանի բողոքը:

29.03.2017թ. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք- Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ, երկրորդ դասի խորհրդական Ն. Խաչատրյանի կողմից բողոք է ներկայացվել ՀՀ Վերաքննիչ քրեական դատարան ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ ԵԿԴ/0002/11/17 գործով 14.03.2017թ. կայացված որոշման դեմ:

20.07.2017թ. ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Մ. Պապոյանը մերժել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք- Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ, երկրորդ դասի խորհրդական Ն. Խաչատրյանի կողմից ներկայացված բողոքը ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ ԵԿԴ/0002/11/17 գործով 14.03.2017թ. կայացված որոշման դեմ:

15.08.2017թ. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք- Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ն. Խաչատրյանի կողմից բողոք է ներկայացվել ՀՀ Վճռաբեկ դատարան ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ ԵԿԴ/0002/11/17 գործով 14.03.2017թ. կայացված որոշման դեմ: Դատախազության բողոքը մերժվել է:

29.01.2018թ. թիվ 63203516 քրեական գործի նախաքննությունը վերսկսվել է:

Հասարակության իրազեկման նպատակով «Կոռուպցիայի դեմ պայքար՝ հանուն ժողովրդավարության ամրապնդման» ծրագրի շրջանակներում՝ *National Endowment for Democracy* Ֆոնդի ֆինանսական աջակցությամբ պատրաստվել են սոցիալական երկլեզվանի տեսահոլովակներ¹՝ Գանձագողի հիշատակարանը՝ մաս 1-ին և մաս 2 խորագրերով, ինչպես նաև արտագաղթի բուն, կոռուպցիոն պատճառների մասին երկլեզվանի պատմող տեսահոլովակ²:

¹ <https://www.youtube.com/watch?v=3JM2zN5kAL0&t=6s>
<https://www.youtube.com/watch?v=Ez3ZBjF4NV8>

² https://www.youtube.com/watch?v=ciO_HEfph3I